ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

21 Նոյեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

165
(2831)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## «ՈՄԱ»-Ի ԱՌԵՂԾՎԱԾԻ ՀԵՏՔԵՐՈՎ




«ՈՄԱ» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ՝ պատերազմի օրերին եւ դրանից հետո կազմակերպվում էին մի շարք պաշտպանական միջոցառումներ՝ «Գմբեթ» նախագիծը, որի շրջանակներում սահմանային գոտում կառուցվելու են փայտահողային պաշտպանական կետեր, կազմակերպվելու են վարժական հավաքներ, դասընթացներ եւ այլն: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Գմբեթ 1»-ի կառուցումից հետո սկսվել էր հաջորդի կառուցումը, եւ այն կառույցները, որոնք պատրաստվում են դառնալ «Գմբեթ 2», արժեն 2 հազար 300 դոլար: Այս նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ էր 92 հազար դոլար, որը փորձում էին հավաքել տարբեր միջոցներով՝ նվիրատվությունից մինչեւ մակուլատուրա թղթերի հանձնում, որից կուտակված գումարը ուղղվելու էր ծրագրի ֆինանսավորմանը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ «ՈՄԱ»-ն դադարեցրել է իր ծրագրերի, մասնավորապես՝ «Գմբեթ»-ի կառուցումը: Ստացվում է՝ հավաքված գումարները անհայտ ճակատագրի են արժանացել: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «ՈՄԱ» ՀԿ-ի հետ՝ պարզելու, թե ինչ է իրականում տեղի ունեցել. ««Գմբեթ»-ի հետ կապված՝ արդեն երկու օր է՝ աշխատանքներ չեն ընթանում եղանակային պայմանների վատթարացման պատճառով. ձյուն է եկել, այդ իսկ պատճառով էլ հնարավոր չի եղել շարունակել աշխատանքները: Հետագայում միանշանակ վերսկսվելու են աշխատանքները: Նույնիսկ տրակտորի հետ ենք խնդիր ունեցել, քանի որ ճանապարհները անանցանելի են եղել: Տեղեկությունը, թե «ՈՄԱ»-ն դրամահավաք է արել եւ աշխատանքը կիսատ թողել, չի համապատասխանում իրականությանը: Այս պահին միայն «Գմբեթ»-ի աշխատանքներն են կանգ առել, մեր մնացած ծրագրերը՝ դասընթացները, շարունակվում են, որոնց համար եւս դրամահավաք է եղել: Միայն «Գմբեթ»-ի համար չի եղել այդ դրամահավաքը»: Իսկ ո՞վ է վերահսկում փաստացի ռազմականացված կառույցի կամ կազմակերպության գործունեությունը: «ՈՄԱ»-ի դրամահավաքների, նախագծերի ու դասընթացների վերահսկողության մասով «Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնեցին, որ ՀՀ ՊՆ-ն կամ ԶՈՒ ԳՇ-ն «ՈՄԱ» հասարակական կազմակերպությանը ինժեներական աշխատանքների կատարման թույլտվություն չի տվել, եւ «ՈՄԱ» հասարակական կազմակերպությունը «պաշտպանական երկրորդ գծում», ինչպես նաեւ ՀՀ ԶՈՒ պատասխանատվության գոտիներում ինժեներական աշխատանքներ չի կատարել եւ չի կատարում: «ՈՄԱ» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Գմբեթ-2» ծրագիրը ֆինանսավորելու վերաբերյալ Պաշտպանության նախարարությանն ուղղված դիմում, առաջարկ չի եղել: 2023թ. օգոստոսին ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունն է դիմել ՀՀ քաղաքացի Տիգրան Շահինյանը՝ մաշված անվադողերի միջոցով կրակակետ պատրաստելու առաջարկով: ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունն աջակցել է Տ. Շահինյանին՝ «Բաղրամյան» զորավարժադաշտում տրամադրելով համապատասխան տարածք: Տ. Շահինյանը պատրաստել է կրակակետը՝ օգտագործելով 3.5մ տրամագծով 1 հատ մեծ եւ 27 հատ փոքր անվադողեր, 15-20 հատ կոճափայտ (երկաթգծի փայտե շպալ), 15-20 հատ հողակիր պարկ: Բոլոր միջոցները եղել են նախկինում օգտագործված, եւ դրանց ձեռք բերման համար ֆինանսական միջոցներ չեն պահանջվել:

*Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:*



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Նարեկ Զեյնալյանը քաղաքական կարիերան սկսել է 2018 թվականի հեղափոխությունից հետո: Մինչ այդ՝ 2010-2018 թվականներին, Զեյնալյանը «Էրեբունի» բժշկական կենտրոնում աշխատել է որպես բժիշկ-էնդոսկոպիստ: Բժշկի՝ երկար տարիների կարիերայի ընթացքում համատեղ սեփականությամբ ձեռք է բերել 1 անհատական բնակելի տուն, 2 բնակարան բազմաբնակարան շենքում: Անհատական բնակելի տունը 2011 թվականին ձեռք է բերել Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքում: Բնակարանները ձեռք են բերվել 2016 եւ 2017 թվականներին Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում: Զեյնալյանը հայտարարագրել է 2014 թվականին ձեռք բերված մեկ տրանսպորտային միջոց՝ 2006 թվականի արտադրության, Mercedes-Benz մակնիշի մեքենա: Զեյնալյանը 2021 թվականին ձեռք է բերել «ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ-ի բաժնեմասը, տվյալ տարվա վերջում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքների արժեքը կազմել է 676 հազար դրամ: Զեյնալյանի բանկային ավանդները տարեսկզբին կազմել են 20 մլն 715 հազար դրամ, որը տարեվերջին զրոյացել է: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 102 հազար դրամ եւ 1100 ԱՄՆ դոլար: Զեյնալյանի կրիպտոարժույթները կազմել են 200 ԱՄՆ դոլար: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 11 մլն դրամ եւ 15 հազար ԱՄՆ դոլար: ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 44 մլն 734 հազար դրամ: Եկամուտներից 9 մլն 485 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, 24 հազար դրամը շահաբաժին է «ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ-ից, քանի որ, ինչպես նշված է հայտարարագրում, Զեյնալյանը բաժնեմաս ունի նշված բանկում: Զեյնալյանը այլ եկամուտներ ստացել է ID Bank-ից եւ «Ինեկոբանկ»-ից: Պատգամավորի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 45 մլն 890 հազար դրամ, որը 2 բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, եւ հենց այս պատճառով է, որ Զեյնալյանը ՊԵԿ-ից ստացել է 1 մլն 510 հազար դրամ, որն էլ եկամտահարկի վերադարձի սկզբունքով հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է:

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը «մեկուսացել է» թիմից: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրներն են փոխանցում, նա մտերմություն է անում Լենա Նազարյանի ու Մարիա Կարապետյանի հետ: Թիմի մյուս անդամների հետ միայն «բարեւ, ոնց ես»-ի մակարդակի են շփումները, թեեւ կոնֆլիկտ էլ չունի որեւէ մեկի հետ: Կուսակցական նիստերին ու քննարկումներին էլ հազվադեպ է մասնակցում, մասնակցելիս էլ շատ պասիվ է: Թե որն է պատճառը, ՔՊ-ականները չգիտեն, բայց այն բանից հետո, երբ այս տարեսկզբին իր կամքով հրաժարվեց ԱԺ արտաքին հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնից, այլեւս կուսակցական ակտիվություն էլ չի դրսեւորում: Նկատենք, որ Էդուարդ Աղաջանյանը պասիվ է նաեւ ԱԺ-ում եւ հազվադեպ է ելույթներ ունենում:

Երեկ ԲԴԽ-ն պաշտոնապես դադարեցրեց Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբոր՝ ԲԴԽ անդամ Դավիթ Խաչատուրյանի լիազորությունները: Մեզ հասած սեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ-ում խոսակցություններ կան, որ քաղաքական իշխանությունները քննարկել են Դավիթ Խաչատուրյանի փոխարեն ԲԴԽ տանել արդարադատության նախկին նախարար Արտակ Զեյնալյանին, սակայն վերջնական որոշում դեռ չկա: Ավելի ուշ քննարկվել է փաստաբաններից մեկի թեկնածությունը, որը եւս վերջնական չէ: Ասել է թե՝ քաղաքական իշխանությունները ԲԴԽ անդամի թեկնածուի փնտրտուքի մեջ են: Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 25-ին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամ Դավիթ Խաչատուրյանը, ՀՀ ԱԺ-ի կողմից ընտրվեց Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, իսկ ԲԴԽ անդամ Նաիրա Հովսեփյանը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր: Հիշեցնենք, որ Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրել էր Կարեն Թումանյանի, Նաիրա Հովսեփյանի եւ Գուրգեն Մալխասյանի թեկնածությունները: Բարձրագույն դատական խորհուրդը քրեական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրել էր Դավիթ Խաչատուրյանի, Անահիտ Հակոբյանի եւ Մանվել Շահվերդյանի թեկնածությունները: Արդեն կար ներքին որոշում ընտրել Դավիթ Խաչատուրյանին:

ԶՐՈՒՅՑ

# ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

**«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի խորհրդարանի 5 խմբակցությունները նախորդ շաբաթ համատեղ նիստ են արել: Նիստը վարել է ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցը: Մեր տեղեկություններով՝ Արցախի պատգամավորները քննարկել են իրենց առաջիկա անելիքները, ԱԺ նիստ հրավիրելու հետ կապված հարցեր: Ինչպես մեր աղբյուրներն են հայտնում, Արցախի պատգամավորների մոտ կոնսենսուս կա առաջիկայում Արցախի ԱԺ նիստ հրավիրել, այս ընթացքում քննարկումներ են գնում՝ օրակարգի հետ կապված: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Դավիթ Գալստյանը հաստատեց այս տեղեկությունը՝ մանրամասներ ներկայացնելով քննարկումից:**

-Կոնկրետ ոչ թե հավաքվել են, ինչ-որ հարցեր են քննարկել, այլ պետք է Ազգային ժողովում հավաքվեն, իրենց նիստերը անեն: Ազգային Ժողովը գործող մարմին է: Մենք պարբերաբար եւ՛ հավաքվում ենք, եւ՛ հավաքվելու ենք, եւ՛ հետագայում ինչ-որ անելիքներ ձեռնարկելու ենք՝ Ազգային ժողովի գործառույթներին համապատասխան:

**-Այսինքն՝ օրակարգում հիմնականում առաջիկայում Ազգային Ժողովի նիստ հրավիրելու հարցն է եղել:**

-Ոչ թե օրակարգում, այլ դա պարտականություն է: Դա միշտ էլ եղել է Ազգային ժողովի պարտականություն եւ ոչ թե ցանկություն: Այն պատգամավորը, որը որ չի մասնակցում կամ, նախանշված օրենքի համաձայն, մի քանի նիստերից բացակայում է, խնդիրներ է ունենալու մանդատը պահելու հարցում:

**-Իսկ կա՞ն պատգամավորներ, որոնք չեն գալիս նիստերին:**

-Իմ ունեցած տեղեկություններով՝ գերակշիռ մեծամասնությունը կողմակից է:

**-Օրակարգ կա՞: Գիտե՞ք, թե ինչ եք քննարկելու: Արցախի ինքնորոշման հարցը լինելո՞ւ է:**

-Օրակարգը քննարկվում է, եւ երբ որ աշխատանքային խորհրդակցություն կլինի, այդ ժամանակ կորոշվի ամեն ինչ հստակորեն:

**-Իսկ ժամկետներ կա՞ն հստակ, թե երբ եք նիստ հրավիրելու:**

-Մինչեւ ամսվա վերջ նիստը կկայանա:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

## «ՀԱՅԱՔՎԵ»-Ն՝ ԱԺ-ՈՒՄ

«Հայաստան» խմբակցության նախաձեռնությամբ՝ նոյեմբերի 24-ին կանցկացվեն խորհրդարանական լսումներ՝ ««ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնության առաջադրած օրակարգային հարցի մասին» խմբակցության ներկայացրած ԱԺ հայտարարության նախագծի վերաբերյալ:

«ՀայաՔվե» նախաձեռնության օրենքի նախագիծը խիստ պատիժ է նախատեսում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումից հրաժարվելու եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հանրային լսումներին մասնակցելու են «ՀայաՔվե» նախաձեռնության անդամները, ԱԺ պետահիրավական հանձնաժողովի անդամ պատգամավորները եւ մյուս պատգամավորները՝ ըստ ցանկության:

Հիշեցնենք, որ նախագիծը 50.000 եւ ավելի ստորագրություն էր հավաքել, ԿԸՀ-ն հաստատել էր «ՀայաՔվե»-ի ներկայացրած ստորագրությունների վավերականությունը, եւ մուտքագրվել էր այն ԱԺ:

Մեկ ամիս շրջանառության մեջ մնալուց հետո գլխադասային հանձնաժողովը, այս դեպքում՝ ԱԺ պետահիրավական հանձնաժողովը, դրական կամ բացասական եզրակացություն պետք է տա:

Անկախ եզրակացությունից՝նախագիծն ընդգրկվելու է ԱԺ լիագումար նիստերի օրակարգ:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ՊԵՍԿՈՎՆ ՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը, մեկնաբանելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերը Երեւանի ու Բաքվի եւ պատերազմի պատրաստվելու մասին, հայտնել է, որ ծանոթ չէ դրանց. տեղեկացրել է «ՌԻԱ Նովոստի»-ն:

Ավելի վաղ՝ Փաշինյանը Երեւանում տեղի ունեցած ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նիստին, հայտարարել էր, որ Հայաստանը նոր թեժացման սպառնալիք է տեսնում Բաքվի կողմից իրականացվող այսպես կոչված «արեւմտյան Ադբեջանի» հայեցակարգի պատճառով: Նա նաեւ հայտարարել էր, որ Երեւանի համար անհասկանալի է Բաքվի դիրքորոշումը, որը հրաժարվում է վերադարձնել գերիներին:

«Ես, ցավոք, ոչինչ ասել չեմ կարող, որովհետեւ ծանոթ չեմ պետական մակարդակով Ադրբեջանի նման հայտարարություններին: Մենք լսել ենք երկրի ղեկավարության՝ Ադրբեջանի ղեկավարության միանգամայն այլ հայտարարություններ, որոնցում ասվում է մի փուլի ավարտի անհրաժեշտության եւ խաղաղության պայմանագրի կնքման պատրաստակամության մասին: Ուստի, կոնկրետ Փաշինյանի հայտարարությունների մասով ոչինչ ասել չեմ կարող»,- ասել է Պեսկովը՝ պատասխանելով այն հարցին, թե ինչպես են Կրեմլում ընդունել Փաշինյանի հայտարարությունները:

## ԸՆԴՈՒՆԵԼ Է

Նոյեմբերի 20-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է ԵԱՀԿ ԽՎ Ուկրաինայի պատվիրակության ղեկավար Միկիտա Պոտուրաեւին: Այս մասին տեղեկացրին ԱԽ գրասենյակից: Հանդիպմանը կողմերը քննարկել են տարածաշրջանային եւ արտատարածաշրջանային անվտանգային իրավիճակն ու ընդգծել կայուն խաղաղություն ունենալու անհրաժեշտությունը: Վերոնշյալի շրջանակներում ԱԽ քարտուղարը ներկայացրել է ՀՀ մոտեցումները տարածաշրջանային որոշ խնդիրների շուրջ:

## Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրել է. «Այսօր Երեխաների միջազգային օրն է: 1959թ. նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց Երեխաների իրավունքների հռչակագիրը:

Այս տարի տոնի կարգախոսն է՝ «Յուրաքանչյուր երեխայի համար յուրաքանչյուր իրավունք»:

Այս համատեքստում ուզում եմ հիշեցնել, որ մեր սրբագույն Արցախի շուրջ 30000 երեխաների իրավունքներ շարունակվում են խախտված մնալ:

Նրանք զրկված են իրենց հայրենի մանկապարտեզը, դպրոցը հաճախելու, իրենց բակում խաղալու, ոմանք իրենց ծնողին, եղբորը տեսնելու իրավունքներից... Իսկ ինչքան անմեղ երեխաների մատղաշ կյանքեր ընդհատվեցին... Այսպիսի ապագա մենք չէինք նախատեսել մեր երեխաների համար... Նրանց իրավունքների վերականգման համար պայքարը յուրաքանչյուրիս առաքելությունն է, որը մի օր պետք է պսակվի հաղթանակով:

Թող աշխարհի բոլոր մանուկներն ապրեն ԽԱՂԱՂ երկնքի տակ:

Շնորհավորում եմ մեր հրաշք երեխաներին, որոնք իրենց ներկայությամբ մեր ծանրաբեռնված առօրյան դարձնում են իմաստալից, իսկ աշխարհը՝ ավելի բարի ու ազնիվ»:

## ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԲԱՑՄԱՆԸ

Ադրբեջանում շարունակում են նախապատրաստվել «Զանգեզուրի միջանցքի» բացմանը, կարծես ոչինչ չի եղել:

«Ադրբեջանի կառավարությունն աշխատում է Զանգեզուրի միջանցքը շահագործման հանձնելու ուղղությամբ. այս գործընթացներին մասնակցում է նաեւ Մաքսային պետական կոմիտեն (ՄՊԿ): Այժմ մենք աշխատում ենք Զանգեզուրի միջանցքի անցակետերի վրա»,- լրագրողներին ասել է Պետական մաքսային կոմիտեի նախագահ Շահին Բաղիրովը. հայտնում է ԱՊԱ-ն:

«Միաժամանակ մենք աշխատում ենք նոր նախագծերի վրա, եւ հաջորդ փուլում կսկսվեն շինարարական աշխատանքները»,- հավելել է Շահին Բաղիրովը:

«Զանգեզուրի միջանցքը» վերաբերում է Հայաստանի տարածքով անցնող մեկ կամ, ավելի ճիշտ, երկու երթուղու՝ երկաթուղային եւ ավտոճանապարհային: Երեւանը կտրականապես հայտարարել է, որ մերժում է «միջանցքային տրամաբանության» ոգով ցանկացած մոտեցում եւ մերժում է հաղորդակցություններին արտատարածքային կարգավիճակ տալու ցանկացած փորձ:

Բաքուն համառորեն շարունակում է հաղորդակցությունները «միջանցք» անվանել, թեեւ այս երկրի նախագահի մակարդակով թույլ փորձեր են արվել խոսել ճանապարհի նկատմամբ Հայաստանի ինքնիշխանության մասին:

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ

Երեկ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը եւ ՀՀ ԱԳ փոխնախարար Պարույր Հովհաննիսյանը ստորագրել են Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ Եվրոպական միության առաքելության կարգավիճակի մասին համաձայնագիրը: Այս համաձայնագրով կարգավորվում է Հայաստանում ԵՄ առաքելության (ՀԵՄԱ) իրավական կարգավիճակը: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Հայաստանում ԵՄ գրասենյակից:

Հիշեցնենք, որ առաքելությունը տեղակայվել է 2023 թվականի փետրվարի 20-ին երկու տարի մանդատով եւ ունի 103 անձից բաղկացած միջազգային անձնակազմ, այդ թվում՝ ԵՄ փորձագետներ ու դիտորդներ ԵՄ անդամ պետություններից:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ». Ի՞ՆՉ Է ԱՅՆ

**Դեռ 2022 թվականի փետրվար ամսին Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստում խոսում էր «Հայկական խաչմերուկի» մասին, որ Հյուսիս-Հարավ նախագիծը վերաձեւակերպել են ու դարձրել Հյուսիս-Հարավ-Արեւելք-Արեւմուտք նախագիծ:**

Այդ ճանապարհի կամ, եթե կարճ ասենք, «Հայկական խաչմերուկի» ճյուղերից մեկը կկապի հյուսիսն ու հարավը, այսինքն՝ Հայաստանից դեպի Իրան, մյուսը ճյուղը՝ Ադրբեջան-Հայաստան եւ հետագայում դեպի Նախիջեւան-Թուրքիա:

Այս նախագծի արժեքը, ըստ Փաշինյանի, մի քանի 100 մլն ԱՄՆ դոլար է: Նիկոլ Փաշինյանը նշել էր նաեւ, որ մեկնարկել են Երասխ-Ջուլֆա-Օրդուբադ-Մեղրի-Հորադիզ երկաթուղու հայկական հատվածի կառուցման տեխնիկական եւ նախագծային աշխատանքները: Հայաստանի կառավարությունը վերաձեւակերպել է «Հյուսիս-Հարավ» նախագիծը՝ դարձնելով «Հյուսիս-Հարավ/Արեւելք-Արեւմուտք» կամ «Հայկական խաչմերուկ» անուններով: 2023 թվականին «Հայկական խաչմերուկը» ռեբրենդինգի ենթարկվեց, եւ ԵԽ բարձր ամբիոնից Նիկոլ Փաշինյանն այն անվանեց «Խաղաղության խաչմերուկ»:

Թբիլիսիում «Մետաքսի ճանապարհ» միջազգային համաժողովի ժամանակ Նիկոլ Փաշինյանն իր ելույթում ներկայացրել է իր կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագիծն ու դրա սկզբունքները, որոնք համաձայնեցվել էին Ադրբեջանի հետ.

Սկզբունք 1. Բոլոր ենթակառուցվածքները՝ ներառյալ ավտոճանապարհները, երկաթուղիները, ավիաուղիները, խողովակաշարերը, մալուխները, էլեկտրահաղորդման գծերը, գործում են այն երկրների ինքնիշխանության եւ իրավազորության ներքո, որոնց տարածքով անցնում են:

Սկզբունք 2. Յուրաքանչյուր երկիր իր տարածքում իր պետական ինստիտուտների միջոցով իրականացնում է սահմանային եւ մաքսային հսկողություն, ինչպես նաեւ ապահովում է ենթակառուցվածքների՝ ներառյալ դրանցով բեռների, տրանսպորտային միջոցների, մարդկանց անցման անվտանգությունը:

Սկզբունք 3. Նշված ենթակառուցվածքները կարող են օգտագործվել ինչպես միջազգային, այնպես էլ ներքին փոխադրումների համար:

Սկզբունք 4. Բոլոր երկրները միմյանց ենթակառուցվածքներից օգտվում են հավասարության եւ փոխադարձության սկզբունքով: Հավասարության եւ փոխադարձության սկզբունքով կարող են իրականացվել սահմանային եւ մաքսային հսկողության ընթացակարգերի որոշակի պարզեցումներ:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Թեւան Պողոսյանի հետ, որը նշեց, որ այս նախագիծը ինչքան էլ քննարկվի, միեւնույնն է, չի իրագործվելու, քանի որ մի ճանապարհ, որը համաձայնեցված չէ հարեւան երկրների հետ, չի կարող իրագործվել:

Փաշինյանի հայտարարություններից հետո ադրբեջանցի քաղաքագետ, Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը արձագանքել էր Նիկոլ Փաշինյանի այս հայտարարությանը եւ նշել, որ Փաշինյանը հերթական անգամ դիմում է մանիպուլյացիայի այնպես, ինչպես ժամանակին վստահեցնում էր, որ հնարավոր է հասնել ղարաբաղյան հարցի այնպիսի լուծման, որն ընդունելի կլինի Արցախի, Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովուրդների համար: Ադրբեջանական լրատվամիջոցներից մեկը Փաշինյանի՝ «Խաղաղության խաչմերուկի» քարտեզային տեսլականը դիտարկել է որպես համաձայնություն «Զանգեզուրի միջանցքին», որքան էլ որ Փաշինյանը պնդի, թե չեն գործում միջանցքային տրամաբանության մեջ:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՀԱՊԿ–Ի ԽՆԴՐԱՆՔԸ

«Հայաստանը հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության իր գործընկերներին խնդրել է օրակարգից հանել երկրին օգնության մասին փաստաթուղթը»,- ասել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Իմանգալի Տասմագամբետովը Մինսկում Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ հանդիպմանը: Նրա խոսքերը հայտնում է BelTA գործակալությունը:

Նա նշել է, որ թեեւ մյուս բոլոր դաշնակիցները պաշտպանել են այս որոշումը, սակայն հայկական կողմը որեւէ հետաքրքրություն չի հայտնել այս փաստաթղթի նկատմամբ, եւ աշխատանքի վերջին մասում Երեւանը խնդրել է այն ընդհանրապես հանել օրակարգից:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը չի մասնակցելու Մինսկում կայանալիք ՀԱՊԿ գագաթնաժողովին: Այս մասին քաղաքական գործիչը հեռախոսով տեղեկացրել էր Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյին:

## ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԵՊՀ–ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել Երեւանի պետական համալսարանի մամուլի քարտուղար Քնար Միսակյանի հետ՝ տեղեկանալու, թե ինչպես են ընթանում դասապրոցեսները համալսարանում:

«Դասապրոցեսները ընթանում են բնականոն հունով, ուսանողության շրջանում վախի զգացում չկա: Մենք նորմալ մեր աշխատանքներն ենք շարունակում»,- ասել է մամուլի քարտուղարը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ նոյեմբերի 17-ի առավոտյան, նախնական վարկածով, հոսանքի տատանումից հրդեհ էր բռնկվել Երեւանի պետական համալսարանի առաջին մասնաշենքի նկուղային հարկում:

Նախնական տվյալներով՝ պատահարի հետեւանքով մեկ մարդ զոհվել է, երեք մարդ՝ հոսպիտալացվել: Տուժածները ԵՊՀ կանաչապատման բաժնի աշխատակիցներ են, մահացածը՝ եւս:

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի խորհրդարանի 5 խմբակցությունները նախորդ շաբաթ համատեղ նիստ են արել: Նիստը վարել է ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցը:

Մեր տեղեկություններով՝ Արցախի պատգամավորները քննարկել են իրենց առաջիկա անելիքները, ԱԺ նիստ հրավիրելու հետ կապված հարցեր:

Ինչպես մեր աղբյուրներն են հայտնում, Արցախի պատգամավորների մոտ կոնսենսուս կա առաջիկայում Արցախի ԱԺ նիստ հրավիրել. այս ընթացքում քննարկումներ են գնում՝ օրակարգի հետ կապված:

ԱԱԾ

# ԿԵՆՏՐՈՆԻ ԹԱՂԱՊԵՏՆ ՈՒ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

**«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանը ներկայացել է Հակակոռուպցիոն կոմիտե եւ հարցաքննվել: Մինչ հարցաքննությունը, մեզ հասած տեղեկությունների համաձայն, ուշագրավ զարգացումներ են եղել:**

Կենտրոն համայնքի ղեկավար Սամվել Ղուկասյանին Հակակոռուպցիոն կոմիտեն ծանուցում է ուղարկել՝ ներկայանալու հարցաքննության, սակայն Սամվել Ղուկասյանը ծանուցման մեջ նշված օրը չի ներկայացել կոմիտե, ուստի, մեր աղբյուրների պնդմամբ, ԱԱԾ աշխատակիցները մտել են թաղապետարան ու թաղապետի հետ միասին ներկայացել են նախաքննական մարմին, որտեղ էլ Ղուկասյանը հարցաքննվել է:

Տեղեկությունը փորձեցինք անձամբ պարզել Հակակոռուպցիոն կոմիտեից, որտեղից չմեկնաբանեցին՝ նշելով, որ քրեական վարույթի շրջանակում հարցաքննվող անձանց վերաբերյալ տվյալներ չեն հայտնում:

Իսկ ի՞նչ քրեական վարույթի շրջանակներում են Ղուկասյանին կանչել հարցաքննության:

Ինչպես հայտնի է, ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված տվյալների հիման վրա՝ ԱԱԾ քննչական գլխավոր վարչությունում նախաձեռնված եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Տիգրան Մարտիրոսյանը, որը համայնքի ղեկավար Սամվել Ղուկասյանի հովանավորյալն է եւ սիրելին, զբաղեցնելով Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետի պաշտոնը, նույն բաժնի աշխատակից Արման Հ.-ի հետ տարբեր անձանցից ստացել են ընդհանուր շուրջ 1մլն 700 հազ. ՀՀ դրամ կաշառք:

Ըստ նախաքննությամբ ստացված տվյալների՝ վերը նշված անձինք իրենց ծառայողական լիազորությունները, ինչպես նաեւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող ընկերության օգտին հրատապ գնման ընթացակարգերի մասին ընկերության տնօրենին տեղեկացնելու եւ անհրաժեշտ խորհրդատվությամբ այդ ընթացակարգերին տվյալ տնտեսվարողի պարտադիր մասնակցությունն ապահովելու համար 2023 թվականի հուլիսի 11-ին նրանից ստացել են 1.000.000 ՀՀ դրամ կաշառք:

Բացի այդ, Տիգրան Մարտիրոսյանը, դարձյալ Արման Հ.-ի հետ նախնական համաձայնությամբ, իրենց ծառայողական լիազորություններն ու ազդեցությունն օգտագործելով, Ն. Ա.-ին եւ Ա. Ա.-ին փաստացի պատկանող՝ Երեւան քաղաքում գործող սրճարանների դիմաց անցուղիների տեղադրման եւ նախատեսված գազոնային ծածկի հաշվին մայթի լայնացման աշխատանքներն անտեսելու ու չարձանագրելու համար նրանցից 2023 թվականի հուլիսին եւ օգոստոսին ստացել են շուրջ 700.000 ՀՀ դրամ կաշառք:

13.11.2023թ. կաշառք ստացած երկու պաշտոնյաներն ու վերջիններիս կաշառք տված անձանցից երկուսը ձերբակալվել էին:

Կենտրոն վարչական շրջանի կոմունալ տնտեսության բաժնի պետ Տիգրան Մարտիրոսյանը եւ նույն բաժնի աշխատակիցը կալանավորված են: Ահա այս քրեական վարույթի շրջանակներում էլ Սամվել Ղուկասյանը հարցաքննվել է: Մենք կհետեւենք քննության ընթացքին:

***ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՍՏԻՊԵԼ ԵՆ

## ՊԱՇՏՈՆԻՑ ՀԵՌԱՑՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատավոր Ռուբեն Ներսիսյանի լիազորությունները դադարեցվել են:

Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ռուբեն Ներսիսյանի լիազորությունները դադարեցվել են:

Հիշեցնենք, որ 2023 թվականի սեպտեմբերի 12-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը եւ նրա ընկեր, արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը քաղաքական հաշվեհարդար են տեսնում դատավորների հետ: ՔՊ-ի հետ չհամագործակցելու համար քաղաքապետի թեկնածուներից մեկի փեսային փաստացի ստիպել են ազատման դիմում գրել»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օրերս Կարեն Անդրեասյանը եւ Գրիգոր Մինասյանը փաստացի (ճնշման տարբեր օղակներ գործի դնելով) ստիպել են Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ներսիսյանին, որպեսզի աշխատանքից ազատման դիմում գրի կամավոր: Պատճառը Երեւանի ավագանու ընտրությունների մասնակից, «Հաղթանակ» կուսակցության քաղաքապետի թեկնածու Վիկտոր Մնացականյանն է:

Պարզվում է՝ այս ընթացքում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը տարբեր օղակներով փորձում է հնարավոր թեկնածուների հետ հանդիպել, խոստումներ ստանալ, թե ընտրություններից հետո արդյոք պատրաստվում են ՔՊ-ի հետ կոալիցիա-դաշինք ձեւավորել եւ քաղաքապետ ընտրել ՔՊ թեկնածուին: Վիկտոր Մնացականյանը քանի որ կտրուկ մեժել է համագործակցությունը ՔՊ-ի հետ, նրա փեսային՝ դատավոր Ռուբեն Ներսիսյանին, ստիպել են ԲԴԽ-ից ազատման դիմում գրել հեռանալ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դատավորի ազատման դիմումն արդեն ԲԴԽ-ում է: Իհարկե, փորձեցինք այս տեղեկությունը ճշտել երկու կողմերից. դատավոր Ռուբեն Ներսիսյանը երեկ ողջ օրն այդպես էլ չպատասխանեց մեր հեռախոսազանգերին, իսկ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանն իր խոսնակի միջոցով փոխանցեց. «Բացառիկ հորինվածքներն ու բամբասանքները զվարճալի կլինի մեկնաբանել»:

ՈՒՇԱԳՐԱՎ

## ՍՊԱՆԵԼ Է ՍԿԵՍՈՒՐԻՆ

Տաթեւիկ Մաթեւոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունենալու հետեւանքով անօգնական վիճակում գտնվող եւ իր հետ համատեղ բնակվող ամուսնու ծնող՝ Վարսենիկ Մարկոսյանի մերձավոր ազգականը, վերջինիս հետ ունենալով մշտական լարված հարաբերություններ, վերջինիս սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ պարբերաբար ծեծի է ենթարկել նրան՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով նրա գլխի շրջանին:

2023 թվականի ապրիլի 12-ին նախորդող 10 օրերի ընթացքում, գտնվելով նշված բնակարանի խոհանոցում, մետաղական շերեփով 2 անգամ հարվածել է Վարսենիկ Մարկոսյանի գլխի շրջանին՝ վերջինիս պատճառելով գլխուղեղի տարածուն վնասվածքային ախտահարում՝ փակ բութ գանգուղեղային վնասվածք, կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածքներ, որոնք 2023 թվականի ապրիլի 02-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, հիշյալ տանն անմիջականորեն հանգեցրել են Վարսենիկ Մարկոսյանի մահվանը:

Կատարողը տնային կալանքի տակ է, իսկ գործը ուղարկվել է դատարան:

## ՈՒԵԼՍՑԻՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑԻՆ

6 օտարերկրացի, խուլիգանություն կատարելու հիմքով, ձերբակալվել եւ համապատասխան փաստաթղթերով ներկայացվել էին Քննչական:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել էր ՆԳՆ ոստիկանությունից:

«Եւս 16-ը հասարակական վայրում ոգելից խմիչքի ազդեցության տակ երեւալու հիմքով ձերբակալվել, բերվել էին բաժին եւ ազատ էին արձակվել»,- մանրամասնել էին ոստիկանությունից:

Ավելի վաղ հայտնել էինք, որ, ըստ BBC-ի, 32 ուելսցի երկրպագու է ձերբակալվել Հայաստան-Ուելս խաղից առաջ: Ձերբակալվածները իրավապահներին հայտնել էին, որ խաղից առաջ սիրում են շատ խմել, խմել են, միմյանց չեն հասկացել ու սկսել են վիճել:

Հիշեցնենք, որ ֆուտբոլի Եվրոպայի 2024 թվականի առաջնության ընտրական մրցաշարի նախավերջին փուլում Հայաստանի հավաքականը Երեւանում ոչ-ոքի՝ 1:1 խաղաց Ուելսի ընտրանու հետ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները քննարկում են ուելսցիների նկատմամբ քրեական վարույթը կարճել:

***Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ***

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 17-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 155 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### ԴԻՊԼՈՄ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթը Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանից տեղեկանում է, որ համայնքի սահմանամերձ Մովսես, Արծվաբերդ, Չինարի եւ Պառավաքար բնակավայրերի վարչական ղեկավարներ Ջավեն Պապյանը, Օնիկ Բալյանը, Սամվել Սաղոյանը, Ռոլանդ Մարգարյանը ազատվել են իրենց զբաղեցրած պաշտոններից, քանի որ, օրենքի համաձայն, 1000-ից ավել բնակիչ ունեցող բնակավայրերի վարչական ղեկավարների համար բարձրագույն կրթություն ունենալը պարտադիր է, իսկ նշված պաշտոնյաները բուհ չեն ավարտել:

### ՀՈԳԵԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԻ

Արցախից բռնագաղթելուց հետո Դիլիջանի գիշերօթիկ դպրոցի շենքում ապաստանած, ապա սահմանամերձ Մովսես գյուղում իր երկու աղջիկների հետ բնակություն հաստատած մոտ 40 տարեկան կինը հոգեկան խնդիրներ ունի: Կնոջ աղջիկներից մեկը Մովսեսի միջնակարգ դպրոցի 7-դ դասարան է հաճախում, մյուս աղջիկը փոքր է, մանկապարտեզ հաճախելու տարիքի է, սակայն մայրը չի թողնում, որ երեխան մանկապարտեզ հաճախի: Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը հայտնեց, որ մասնագետ բժիշկների խումբը կուսումնասիրի կնոջ առողջական վիճակը, որպեսզի որոշի, թե ինչպես վարվել նրա հետ, պարզի՝ նա կարող է արդյոք իրականացնել իր երեխաների խնամքն ու դաստիարակությունը: Նոյեմբերի 14-ին Բերդի համայնքապետարանում կայացած՝ համայնքապետարանի, Տավուշի մարզպետարանի, ոստիկանության, դպրոցների մանկավարժների մասնակցությամբ խորհրդակցությունում, որը վերաբերում էր կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հետ տավող աշխատանքներին, քննարկվել է նաեւ Մովսես գյուղում հաստատված այդ ընտանիքում տիրող իրավիճակը:

### ՄԱՐԶՊԵՏԸ ԼՌՈՒՄ Է

Սեպտեմբերի 23-ից մինչեւ հոկտեմբերի 8-ը տեղի է ունեցել հանրակրթական դպրոցների տարբեր առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման հերթական փուլը: Հոկտեմբերի 10-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ հարցնելով, թե այդ գործընթացին Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների քանի ուսուցիչ է մասնակցել, նրանք ատեստավորումից ինչ արդյունքներ են ունեցել: Նոյեմբերի 2-ին ստացված պատասխանում նշված է. «Քանի որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչները կամավոր ատեստավորմանն իրենք են հայտագրվում, հետեւաբար մենք չունենք նման տեղեկատվություն: Արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն կունենաք նոյեմբերի սկզբին»: Նոյեմբերի 8-ին նույն հարցումը կրկին ուղարկել ենք մարզպետին, նոյեմբերի 15-ին ստացել ենք հետեւյալ պատասխանը. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակիցների եւ արդյունքների վերաբերյալ դեռեւս տեղեկատվություն չունենք»:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԿՈՒՂԱՐԿԵՆ

**Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը առաջարկել է մի նախագիծ, ըստ որի՝ դեկտեմբերի 1-ից ուժի մեջ կմտնեն ամենամյա արձակուրդի տրամադրման նոր կարգավորումները: 30 ամիս արձակուրդ չգնալու դեպքում գործատուն կարող է աշխատողին առանց դիմումի ուղարկել արձակուրդ, հակառակ դեպքում չուղարկված ամեն օրվա համար կվճարի տույժ՝ միջին ամսական աշխատավարձի 0,15%-ի չափով:**

«Ժողովուրդ» օրաթերթը կապվել է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության մամուլի քարտուղար Զառա Մանուչարյանի հետ, որը մեզ հետ զրույցում նշեց, որ սա փոփոխվող օրենքներից մեկն է, քանի որ այս տարվա տարեսկզբից Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ են եղել, որոնց ուժի մեջ մտնելու մասին նոր են հայտնում.

«Աշխատանքային օրենսգրքի 266 հոդվածից փոփոխվել է 122-ը: Կային մի շարք խնդիրներ, որոնք այս գործող օրենսդրությունը թույլ չէր տալիս կարգավորել, չհաշված որ միջազգայնորեն մի շարք գործառույթներ կային, որոնք եւս այս օրենսդրությունը չէր կարգավորում: Սա նոր փոփոխություն չէ, բավական ժամանակ է փոփոխել ենք, պարզապես մենք պաշտոնապես հայտնում ենք, որը երբ է ուժի մեջ մտնելու»,- ասել է Զառա Մանուչարյանը:

Զառա Մանուչարյանը հավելեց նաեւ, որ օրենքի փոփոխության անհրաժեշտությունը առաջացել է քաղաքացիների կողմից ստացված բողոքների արդյունքում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապվեց նաեւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի եւ զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանի հետ, որը մեզ հետ զրույցում ներկայացրեց, թե ինչու է առաջացել օրենսգրքի փոփոխության անհրաժեշտությունը:

Հավելենք նաեւ, որ արձակուրդ գնալը եւս կարգավորվում է օրենքի համապատասխան կետով, իսկ արձակուրդայինը հաշվարկվում է Աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի կարգավորումներով, մասնավորապես՝ հաշվարկի ժամանակ դիտարկվում է աշխատողի վերջին 12 ամիսները, եւ վերջին 12 ամիսների մեջ կան ամիսներ, որոնք չեն ներառվում հաշվարկի մեջ. դա եւս կարգավորվում է օրենսգրքի համապատասխան հոդվածով:

Հաշվարկի մեջ չեն մտնում, մասնավորապես, արձակուրդում գտնվելու ամիսները, աշխատանքի ընդունվելու ամիսը, ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու ամիսը: Մյուս ամիսները, որոնք մասնակցում են հաշվարկին, գումարվում են եւ բաժանվում են ամիսների քանակով: Հավարկին մասնակցում են նաեւ ինչպես հիմնական աշխատավարձը, այնպես էլ լրացուցիչ ստացված աշխատավարձը՝ պարգեւներ եւ հավելավճարները: Նշված կարգավորումների մեջ է մտնում նաեւ այն, որ աշխատողը արձակուրդի պետք է գնա իր աշխատանքային տարվա ընթացքում եւ այն կարող է հետաձգել՝ կապված իրեն անհրաժեշտ ժամանակահատվածի հետ:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

**Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, որը գտնվում է ք. Երեւան, Կոմիտասի պող. 49/2 հասցեում, հայտարարում է 2024 թվականի ընթացքում ձեռք բերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայությունների իրականացման համար փորձարկման լաբորատորիաների մրցույթ (մրցույթի ծածկագիրը՝ ՀՀ ՍՍՏՄ-ՓԾՁԲ-24):**

Որակավորման չափանիշներին համապատասխանող մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել շրջանակային համաձայնագրեր (այսուհետեւ՝Համաձայնագիր), որով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում Հայաստանի Հանրապետությունում լաբորատոր փորձաքննության ծառայությունների իրականացման պարտավորությունը (այսուհետեւ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող բնութագրով սահմանելով փորձաքննության ծառայության տեսակը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1228-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի փորձաքննության ձեռք բերման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1228-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի, Տեխնիկական կանոնակարգման մասին օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 23-ի N 623-Ն որոշման հավելվածի 11.1-րդ կետի, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 9-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով, ներառված չեն Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում, նշանակված չեն Եվրասիական տնտեսական միության եւ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնելու համար:

Փորձաքննության ձեռք բերման գործընթացին մասնակցելու համար մասնակիցը պետք է ունենա հրավերով սահմանված որակավորման չափանիշները եւ Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանությունը Համաձայնագրով նախատեսված գործունեությանը, այդ թվում՝ մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Թղթային ձեւով մրցույթի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին (ք. Երեւան, Կոմիտասի պող. 49/2), սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 5-րդ օրը՝ ժամը 16:00-ն: Ընդ որում՝ թղթային ձեւով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձեւով հրավերի տրամադրումն անվճար:

Մրցույթի գրանցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ ք. Երեւան, Կոմիտասի պող. 49/2 հասցեով, փաստաթղթային ձեւով, սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 40-րդ օրվա ժամը 18:00-ն, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 23 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 33-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

## ՀՆԱ-Ի ԱՃԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեկ հրապարակվեց առաջին 9 ամիսների ՀՆԱ աճի թիվը, որը 9,2 տոկոս է: Այս մասին նոյեմբերի 20-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը.

«Չնայած մեծ մարտահրավերներին՝ կառավարությունը գերազանցում է 2013-ի բյուջեով դրված թիրախները՝ 7 տոկոսի փոխարեն հասցնելով 9,2 տոկոսի»,-ասաց նա:

«Ես դեռ 2023-ի բյուջեի քննարկման ժամանակ նշել եմ, որ երեք հիմնական ռիսկերից մեկը աշխատուժի պակասն է, տրնսպորտային խնդիրները եւ անվտանգային խնդիրները»,-ասաց նախարարը՝ հավելելով, որ այսօր կյանքը ցույց է տվել, որ իր կանխատեսումները ճիշտ են:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵՑ

Լոռու մարզի Երեւանյան խճուղում գտնվող հանրային սննդի օբյեկտը գործել է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով, ինչն արձանագրվել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի տեսուչների կողմից նշված կազմակերպությունում իրականացված վերահսկողության ընթացքում: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՍԱՏՄ-ից:

Մասնավորապես՝ սննդի օբյեկտը կառուցված չի եղել այնպես, որ բացառվի կեղտի կուտակումը, օտար մասնիկների թափանցումը սննդի մեջ, գոլորշու խտացումը կամ անցանկալի բորբոսի առաջացումը: Հնարավոր չի եղել կատարել համապատասխան մաքրում եւ ախտահանում, որպեսզի նվազագույնի հասցվի օդից փոխանցվող աղտոտումը: Խոհանոցի պատերն ու առաստաղը չեն ունեցել հարթ մակերես, գտնվել են ոչ նորոգ վիճակում, հնարավոր չի եղել կատարել պատշաճ մաքրում եւ ախտահանում, առկա է եղել մասնիկների թափվելու հնարավորություն: Ապահովված չի եղել սանհանգույցով, ձեռքերի լվացման համար նախատեսված լվացարանով եւ չորացման հիգիենիկ սարքով:

Հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ԱՊՐԱՆՔՆԵՐ

# ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ՝ Wildberries-ԻՑ

**Wildberries-ի կողմից նախատեսվելիք անակնկալը, որը պետք է ուրախացներ հաճախորդներին, արդեն իրականություն է: Օգտատերերը, նոյեմբերի 19-ից սկսած, ծանուցվում են այն մասին, որ ապրանքների վերադարձման դեպքում գումարի հետվերադարձի ժամկետը նվազեցվել է մինչեւ 1-2 օր, դրա համար նոյեմբերի 19-ից հաճախորդները պետք է պատվերը վերադարձնեն միայն այն կետը, որտեղից ստացել են պատվերը:**




«Վաճառքի ժամանակ կրճատում ենք դրամական միջոցների ստանալու ժամկետը ապրանքի վերադարձի դեպքում: Սեզոնի ընթացքում կայացրել ենք որոշում, որը թույլ կտա արագացնել դրամական միջոցների հաշվարկման ժամանակը ապրանքները վերադարձնելու դեպքում: Նոյեմբերի 19-ից ապրանքների վերադարձը վճարումից հետո հնարավոր է միայն պատվերների առաքման այն կետում, որտեղից դրանք նախկինում ստացվել են, ինչը թույլ կտա մեզ պարզեցնել համակարգը եւ նվազեցնել գումարի վերադարձման ժամկետը մինչեւ 1-2 օր:

Եթե մոռացել եք, թե որտեղից եք վերցրել ձեր պատվերը, կամ այն առաքվել է ձեզ առաքիչով, ապա կարող եք պարզաբանել ապրանքների վերադարձման կետը ձեր անձնական հաշվում՝ global.wildberries.ru կայքում՝ «Գնումներ» բաժնում, կամ կապվե՛ք Աջակցության ծառայության հետ: Մոտ ապագայում ձեր հարմարության համար մենք նման ֆունկցիոնալությունը կտեղադրենք հավելվածում»,- ասված է հաղորդագրության մեջ:

Ընդգծվում է նաեւ, որ հաճախորդները, որոնք ապրանքները վերադարձնում են այլ կետեր, բացի այն վայրերից, որտեղից ստացել են պատվերը, կազմում են ընդհանուրի մոտ 6%: Միաժամանակ նման հաճախորդներին գումարների վերադարձման արագությունը կնվազի միջինը 3-4 օր:

Wildberries-ի անակնկալները սակայն հայ հաճախորդների համար սրանով չեն վերջանում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ վերջին ժամանակներում կատարած գնումները զարմանք են առաջացրել հաճախորդների շրջանում: Ապրանքները փաթեթավորված են, ինչպես հարկն է, սակայն փաթեթը բացելուն պես նկատում ես, որ մինչ փաթեթավորված լինելը ապրանքի վրա փակցված է հայերեն «Ներմուծում» պիտակը:

Ստացվում է, որ ապրանքները Հայաստան ներկրվում են մինչ գնում կատարելը, ապա գնելուց հետո Հայաստանից բաշխվում է հայաստանյան ապրանքների ստացման կետեր:

ՀԱՅՏՆԵՑ

# ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ

**Աշխատանքային միգրանտները չեն համարվում զբոսաշրջիկ, բայց եթե Հնդկաստանից զբոսաշրջիկներ էլ այցելեն, մենք միայն ուրախ կլինենք, այդ ուղղությամբ աշխատում ենք: Այս մասին նոյեմբերի 20-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ անդրադառնալով հարցին, թե արդյոք զբոսաշրջիկների թվի մեջ ներառված են Հայաստան եկած հնդիկները:**

«Ասիական շուկան մեզ համար նոր զարգացման ուղղություն է, մենք պարբերաբար մասնակցում ենք այնտեղ զբոսաշրջային ցուցահանդեսների, իրականացնում ենք տարբեր գովազդային արշավներ: Մենք դիվերսիֆիկացնում ենք նաեւ մեր զբոսաշրջային ջանքերը. դա մեր ռազմավարության մեջ է մտնում»,-ասաց նա:

Հարցին, թե, ի վերջո, որքան են Հայաստանում գտնվող հնդիկները, նախարարը պատասխանեց. «Մեր ունեցած թվերը, որոնք վերցրել ենք սահմանահատումների վերաբերյալ, խոսում են այն մասին, որ հնդիկների թիվը Հայաստանում 30 հազարից, գուցե նաեւ 20 հազարից քիչ է: Մենք վերցրել ենք 2010 թվականից ի վեր սահմանահատումների քանակը: 20-30 հազարի միջակայքում է»:

Քերոբյանի խոսքով՝ հնդիկները Հայաստանում տարբեր ոլորտներում են ընդգրկված՝ շինարարություն, գյուղատնտեսություն, ծառայությունների ոլորտ: «Չեմ կարող ասել, որ բարձր որակավորում ունեցող մասնագետներ են գալիս Հնդկաստանից: Այդպիսի մասնագետներ գալիս են ՌԴ-ից, Ուկրաինայից, Բելառուսից: Իսկ Ուզբեկստանից, Իրանից եւ Հնդկաստանից հիմնականում գալիս են ցածր որակավորում ունեցող աշխատողներ, որոնք բանվորական տարբեր մակարդակի գործեր են կատարում»,-ասաց նա:

Անդրադառնալով՝ զբոսաշրջության ապահովության ինդեքսովներին՝ Վահան Քերոբյանը նշեց, որ Հայաստանը 142 երկրների մեջ 7-րդ տեղում է, քանի որ մեր երկրում շատ քիչ է հանցագործությունների քանակը:

«Աշխարհի բոլոր երկրներում զբոսաշրջության ծավալի աճի մակարդակով Հայաստանը 6-րդն է. այն զիջում է Կատարին, Սաուդյան Արաբիային եւ մի քանի այլ երկրների: Համեմատած բազմաթիվ այլ երկրների՝ մեր երկրում զբոսաշրջությունն աճել է»,- հավելեց նախարարը:

Քերոբյանի հավաստիացմամբ՝ գլոբալ այն թիրախները, որոնք ՀՀ կառավարությունը դրել էր իր առջեւ ու նպատակ ուներ հասնելու 2026 թ., արդեն իսկ հասել է. նախատեսված էր, որ 2026 թ. մեր երկիր պետք է գա 2.5 մլն զբոսաշրջիկ, մինչդեռ ՀՀ կառավարությունն արդեն իսկ հասել է այդ թիրախին:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ԿԱՐԾԻՔ

ՀԵՏԱՀԱՅԱՑ

# «ՉԳԻՏԵԻ՝ ՈՒՄ ՓՐԿԵԼ». ՀՈՒՇԵՐ՝ ԱՐՑԱԽԻՑ

**«Պատերազմի չէինք սպասում, վստահ էինք, որ դեռ 5 տարի Արցախում հաստատ կապրենք, սակայն երբ վերջերս սկսեցին Հաթերք գյուղում աղաստարան կառուցել, մարդկանց մոտ որոշակի կասկածներ առաջացան: Երբ պատերազմը սկսեց, ավագ դուստրս Ստեփանակերտում էր, երեխաներիս մի մասը՝ դպրոցում, փոքրերն էլ՝ մանկապարտեզում: Մեր տունը գտնվում է գյուղի ծերին՝ դպրոցից 3 կմ հեռավորության վրա: Տանն էլ սկեսայրիս անկողնային հիվանդ մայրն էր... Կորցրել էի ինձ, չգիտեի, թե որտեղ վազեմ, ում փրկեմ: Ժամեր էր անցել, մինչեւ բոլոր երեխաներիս մի կերպ իրար կողքի հավաքեցի»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ պատմում է Արցախից բռնի տեղահանված Ինգա Հակոբյանը:**

Մի գիշեր կիսակառույց ապաստարանում անցկացնելուց հետո հաթերքցիներին տեղափոխում են Ստեփանակերտի օդանավակայարան՝ռուս խաղաղապահների մոտ: Այստեղ նրանք մնացին մի քանի օր:

«Ոչինչ չեմ հասցրել վերցնել. եթե անգամ ժամանակ էլ լիներ, չէի կարող: Հասցրեցի երեխաներիս իրար կողք հավաքել եւ ճանապարհի պատրաստել սկեսուրիս, սկեսրայրիս եւ սկեսրայրիս ծնողներին: Որպեսզի հարց էր. մի քանի որպես հետո գյուղն ամբողջությամբ դատարկ էր»,- վերհիշում է մեր զրուցակիցը:

Գյուղի բազմանդամ ընտանիքներից էին՝ ամուսնու տատիկը, պապիկը, ամուսնու ծնողները, ինքը, ամուսինը եւ յոթ երեխաները: Ինգան չի բողոքում. Հաթերքում լավ էին ապրում եւ դեռ բլոկադայի օրերին հասցնում էին օգնել կարիքավոր ընտանիքներին: Տան ավագները զբաղվում էին անասնապահությամբ ու հողագործությամբ:

Գյուղում երկու սեփական տուն ունեին, իսկ 3-րդ տունը պետությունն էր կառուցել որպես բազմազավակ ընտանիք: Գյուղում են թողել անգամ գյուղտեխնիկան ու մեքենաներ:

«Տնից ոչինչ չկարողացա հանել. այնքան շփոթված էի այդ օրը, որ մոռացա անգամ մեր հավաքած գումարը վերցնել: Մեր բազմանդամ ընտանիքին ոչ ոք չէր համաձայնում տուն տալ: Սկզբից եկանք Վայք, ու սկսվեցին տան փնտրտուքները, այնտեղից՝ Փոքր Վեդի, սակայն մի շաբաթ անց ստիպված դուրս եկանք եւ եկանք Կոտայքի մարզի Հրազդանի շրջանի Աղավնաձոր գյուղ: Այստեղ տունը հարմար չէր, եւ ստիպված տատիկ-պապիկը գնացին Ռուսաստան այն մտքով, որ շուտով տուն կգտնենք ու նորից կմիավորվենք: Վերջապես Աղավնաձորում տուն ենք գտել, որտեղ մեզ ընդունել են շատ ջերմ ու հյուրընկալ: Եթե հնարավորություն լիներ տուն գնելու կամ ինչ-որ փոխհատուցման, կցանկանայինք մնալ հենց այս շրջանում»,- ասում է Ինգան եւ հավելում, որ չնայած խնդիրները շատ են, բայց փորձում են ստեղծել պայմաններ, մնալ ու հարմարվել Հայաստանում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

## ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ⇨ ՎՏԱՆԳՎԱԾ Է

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 44-օրյա պատերազմից հետո Շուշիի գորգերի թանգարանից Երեւան տեղափոխած մի շարք գորգերի եւ կարպետների հավաքածուներին հատկացված տարածքը հորդորել են ազատել:

Մանրամասներ իմանալու համար «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է կապվել Շուշիի գորգերի թանգարանի հիմնադիր եւ հավաքորդ Վարդան Ասծատրյանի հետ, սակայն վերջինս կտրականապես մերժել է:

Նշենք, որ Արցախի Հանրապետության Շուշիի հնագույն գորգերի եւ կարպետների թանգարանը հիմնադրվել է 2011 թվականին եւ բացվել է 2013 թվականին հավաքորդ Վարդան Ասծատրյանի նախաձեռնությամբ՝ նրա գորգերի ու կարպետների անձնական հավաքածուի հիման վրա:

## ՉԻ ՓՈԽԱՐԻՆԻ ՏՆՕՐԵՆԻՆ

Հոկտեմբերի 30-ին Հովհաննես Թումանյանի թանգարանի արդեն նախկին տնօրեն Անի Եղիազարյանը իր ֆեյսբուքյան էջում հրապարակում էր կատարել, որում ասվում էր.

«Հովհ. Թումանյանի մտքերից մեջբերումներ անելը կամ համարձակությունը նրա մասին խոսելու Հայաստանի սահմաններից դուրս համարվում է աններելի քայլ եւ արժանանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն կողմից պատժի՝ աշխատանքից հեռացում եւ/ կամ մեծահոգաբար հորդորել սեփական դիմումի համաձայն հեռացում/»:

«Ժողովուրդ» օրաթերթը այդ ընթացքում խոսել եւ պարզաբանումներ էր ստացել եւ՛ ԿԳՄՍ նախարարից, եւ՛ Անի Եղիազարյանից:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Անի Եղիազարյանը փաստեց, որ նախարարության հետ կրկին որեւէ քննարկում չի եղել, եւ իրենից հետո, փոխտնօրենի փոխարեն, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Թումանյանի թանգարանի գլխավոր ֆոնդապահ Մարինե Բաղդասարյանը:

«Հ. Թումանյանի թանգարանի աշխատակիցները նախկին փոխտնօրենին՝ Աշոտ Հարությունյանին՝ որպես ոլորտի մասնագետ եւ մեծ փորձառություն ունեցող մարդու, ներկայացրել էին նախարարություն՝ որպես նախընտրելի տնօրեն, նախարարությունը մերժել էր ինչ-որ սուբյեկտիվ պատճառներով: Նախապես լիազորությունները դրված էր փոխտնօրեն Մանե Խաչատրյանի վրա, որը այդպես էլ չստանձնեց այն. հիմա ժամանակավորապես այդ պարտականությունները լիազորել են թանգարանի գլխավոր ֆոնդապահին»:

Անի Եղիազարյանը մեզ հետ զրույցում ասաց, որ նախարարությունից այդպես էլ որեւէ արձագանք չի ստացել:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՍՊՈՐՏ

## ՀԱՂԹԵՑ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ



Աշխարհի վարկանիշային առաջատար սերբ Նովակ Ջոկովիչը նոյեմբերի 19-ին կայացած Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) եզրափակիչ մրցաշարի եզրափակիչ խաղում հաղթել է իտալացի Յաննիկ Սիններին: Մրցույթը կայացել է Իտալիայի Թուրին քաղաքում:

Ջոկովիչը ռեկորդային յոթերորդ անգամ հաղթեց ATP եզրափակչում:

Մինչ խաղը Ջոկովիչը մրցակցի մասին ասել էր. «Նա ֆանտաստիկ թենիս է խաղում: Սա կարող է լինել նրա կյանքի լավագույն թենիսը՝ այս փուլում լավագույն 10 խաղացողների դեմ: Երեկ երեկոյան մենք շատ հավասար հանդիպում անցկացրինք: Մթնոլորտն անհավանական էր: Ես ավելի քիչ բան չեմ սպասում: Հավանաբար նույնիսկ ավելի բարձր, քան այն, ինչ տեղի ունեցավ խմբային փուլի խաղում: Սա եզրափակիչն է: Ես նախկինում բազմիցս հայտնվել եմ այս իրավիճակում: Ես գոհ եմ նրանից, թե ինչ եմ զգում եւ ինչպես եմ խաղում: Հուսով եմ՝ վաղը կկարողանամ ցուցադրել իմ խաղը»,- ասել է թենիսիստը:

## ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻՑ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամներ Ռուսլան Ասլիկյանն ու Էլիդա Քոչարյանը ոսկե մեդալներ են նվաճել Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում անցկացված Եվրոպայի Մ22 տարեկանների առաջնությունում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ 57 կգ քաշայինների եզրափակչում Ասլիկյանն առավելության է հասել Ադրբեջանի ներկայացուցչի նկատմամբ, իսկ աղջիկների 60 կգ քաշային կարգի եզրափակչում Էլիդա Քոչարյանը 3:2 հաշվով կամային հաղթանակ է տարել ռումինացի մարզուհու նկատմամբ: Հայ բռնցքամարտիկներն ընդհանուր առմամբ 2 ոսկե, 1 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ են նվաճել Եվրոպայի Մ22 տարեկանների առաջնությունում: Երիտասարդական ԵԱ-ի փոխչեմպիոնի կոչմանն արժանացել է 51 կգ քաշային Ռուդոլֆ Գարբոյանը, իսկ Հայաստանի հավաքականի մյուս անդամներ Էրիկ Իսրայելյանը (60 կգ), Ռաֆայել Հովհաննիսյանը (86 կգ) եւ Սոնա Հարությունյանը (63 կգ) դարձել են բրոնզե մեդալակիրներ: Կարեն Աղամալյանի գլխավորությամբ՝ Եվրոպայի Մ22 տարեկանների առաջնությանը մասնակցել են նաեւ Ռուբեն Գարբոյանը (54 կգ), Արթուր Շախպազյանը (63, 5 կգ), Արարատ Հարությունյանը (67 կգ), Նարեկ Ջախարյանը (71 կգ), Հենրիկ Ճիղրիկյանը (92 կգ) եւ գերծանր քաշային Հովհաննես Փափազյանը:

● *Նոյեմբերի 22-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Շերշե լա ֆամ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեպքերում գործատուն իրավունք ունի իր նախաձեռնությամբ լուծել աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:**

*Գրիշա Աիարոնյան (37 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման ու օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում,

2) արտադրության ծավալների եւ (կամ) տնտեսական եւ (կամ) տեխնոլոգիական ու (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման եւ (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի եւ (կամ) հաստիքների կրճատման դեպքում,

3) աշխատողի՝զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում,

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում,

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում,

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում,

7) աշխատողի երկարատեւ անաշխատունակության հետեւանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով):

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում ինքնակամ կառույցը:**

*Իրինա Մալխասյան (39 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ի. Մալխասյանի հարցին ի պատասխան՝հայտնում ենք, որ ինքնակամ կառույց է համարվում օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված):

*Կադաստրի կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ինքնակամ կառույցը կարող է քանդվել հողամասի սեփականատիրոջ կողմից: Ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները եւ օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝հողամասի սեփականատիրոջ հաշվին:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Վավերագրական կինոյի հեղինակավոր IDFA կինոփառատոնում Շողակաթ Վարդանյանի «1489» ֆիլմն արժանացել է «Լավագույն ֆիլմ» եւ FIPRESCI մրցանակների:

«Լավագույն ֆիլմ» մրցանակը տրվում է տարվա լավագույն վավերագրական ֆիլմին, իսկ «FIPRESCI»-ն շնորհում է կինոքննադատների եւ կինոմամուլի մասնագիտական հեղինակավոր համաշխարհային ընկերակցությունը: Ֆիլմում ներկայացվում է 44-օրյա պատերազմի յոթերորդ օրն անհետ կորած Սողոմոնի՝ Շողակաթի եղբոր որոնման պատմությունը: «1489» անվանումը Սողոմոնի մասունքներին տրված համարն է:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| | Շիրակ | - 1 - 5<br>+ 1 + 5 |
| | Կոտայքի լեռներ | - 1 - 5<br>+ 1 + 4 |
| | Կոտայքի նախալեռներ | + 1 + 3<br>+ 5 + 8 |
| | Գեղարքունիք | - 2 + 7<br>+ 2 + 5 |
| | Լոռի | - 4 + 1<br>+ 3 + 8 |
| | Տավուշ | - 1 + 3<br>+ 5 + 9 |
| | Արագածոտնի լեռներ | - 2 - 6<br>0 + 3 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 1 + 3<br>+ 6 + 10 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | + 4 + 7<br>+11 + 13 |
| | Արմավիր | + 3 + 6<br>+11 + 13 |
| | Վայոց ձորի լեռներ | 0 + 5<br>0 + 2 |
| | Վայոց ձորի նախալեռներ | + 3 + 8<br>+11 + 3 |
| | Սյունիքի հովիտներ | + 1 + 5<br>+8 + 12 |
| | Սյունիքի նախալեռներ | 0 - 4<br>+ 2 + 6 |
| | ԼՂՀ | 0 - 3<br>+ 3 + 7 |
| | Երեւան | + 4 + 6<br>+11 + 13 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.11.2023**
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*